Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ԸՆՏՐԱԿԱՆ ԲԼՈԿԻ ՄԱՍԻՆ

Ճառ Մոսկվայի Մոլոտովյան ընտրական
ակրուգի ընտրողների ժողովում
1937 թ. դեկտեմբերի 8-ին

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 1939

ՊՐԱԼԵՏԱՐՆԵՐ ԲԱԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

14 FEB 2018

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ԸՆՏՐԱԿԱՆ ԲԼՈԿԻ ՄԱՍԻՆ

Ճառ Մոսկվայի Մոլոտովյան ընտրական okրուգի ընտրողների ժողովում

1937 թ. դեկտեմբերի 8-ին

ՊԱՐՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,
ՅԵՐԵՎԱՆ • 1939

В. М. МОЛОТОВ

Об избирательном блоке коммунистов с беспартийными

Речь на собрании избирателей Молотовского округа Москвы

[illegible] октября 1937 г.

Государственное издательство полит. литературы
Москва 1939

ՀԱՅԿԵՆՏ
1-3864 գր

ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՄԵՐ ՈՒՆԵՑԱԾ ԲԼՈԿԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ընկերնե՛ր, մեր կուսակցությունը հրապարակելով իր «Դիմումը» ընտրողներին, լիովին ծավալեց իր ընտրական դրոշը: Այդ դրոշը կոչում է դեպի սոցիալիզմի նոր հաղթանակներ, կոչում է դեպի աջակցություն Գերագույն Խորհրդի մեջ ընտրելու ինչպես կոմունիստ-թեկնածուներին, նույնպես և անկուսակցական-թեկնածուներին, վորոնց առաջադրել է բոլշևիկյան կուսակցությունն անկուսակցական բանվորների, գյուղացիների, ծառայողների ու ինտելիգենցիայի հետ մեկտեղ: Այդ դրոշը կոչում է ստեղծելու կոմունիստների համերաշխ ընտրական բլոկ անկուսակցական բանվորների հետ, անկուսակցական գյուղացիների հետ, անկուսակցական ծառայողների հետ, անկուսակցական ինտելիգենցիայի հետ, ստեղծելու կոմունիստների այդպիսի բլոկ անկուսակցականների հետ մեր ամբողջ յերկրում: (Ծափահարություններ):

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության գերագույն որգանների ընտրությունները անցկացնել անկուսակցականների հետ կոմունիստ-

ների ունեցած բլոկի հիման վրա, դաշինքի հիման վրա—այս է մեր խնդիրը:

Կարող եր թվալ, թե դա շատ պարզ է: Իրոք, վորպիսի՛ պարզ միտք, պարզ կոչ, պարզ ու հստակ հրավեր է. կոմունիստնե՛ր, դործեցեք անկուսակցական աշխատավորների հետ միասին, կազմակերպեցեք համերաշխ բլոկ ընդհանուր և սուրբ դործի համար, ձեր հայրենիքի, խորհրդային իշխանության դերադույն որդանների ընտրությունների համար: Այժմ դա մեզ կարող է թվալ վորպես միանդամայն պարզ ու հստակ դործ. խորհրդային իշխանության դերագույն որդանների ընտրությունների ժամանակ ստեղծել կոմունիստների ու անկուսակցականների բլոկ: Սակայն դա պարզ ու միանդամայն հստակ դարձավ միմիայն այժմ, Հոկտեմբերի քսանամյակին, յերբ մենք թեւակոխեցինք Հոկտեմբերյան հեղափոխության արդեն յերրորդ տասնամյակը: Ժողովրդի անկուսակցական ամբողջ մասսայի հետ կոմունիստական կուսակցության ունեցած այդպիսի բլոկի վոչ մի նման բան ամենևին չեր կարող լինել մեզնում վոչ միայն մինչև հեղափոխությունը, այլև հեղափոխության առաջին տարիներին:

Իսկ կարելի՞ յե արդյոք վորևե նման բան, ամբողջ ժողովրդի հետ վորևե կուսակցության ունեցած բլոկի նման բան յերևակայել մի ինչ-վոր, ուրիշ, վոչ խորհրդային յերկրում: Ինչո՞ւ համար այնտեղ ևս, բուրժուական յերկրներում, վորևե կուսակցություն չգնա այդ պարզ ու հստակ ուղիով: Թվում է, թե դժվար չպիտի լիներ այդ մտքին հասնել, բայց դե չի լինում: Վո՛չ, այդպիսի խնդիրը բուրժուական պետության մեջ ամեն մի կուսակցության ուժից վեր է: Այնտեղ, կապիտալիզմի յերկրներում, վոր անխուսափելիորեն բդկտված են դասակարդային կռվով, այդ մասին նույնիսկ յերազել անդամ չի կարելի: Բուրժուական վոչ մի կուսակցության ուժը չի պատի այդ բանին:

Միայն Խորհրդային Միության մեջ Հոկտեմբերյան հեղափոխության 21-րդ տարում, միայն բոլշևիկյան կուսակցությունը հնարավորություն ստացավ իր առջև դնելու այդ մեծ խնդիրը: Սա և՛ պարզ, և՛ հստակ խնդիր է, բայց մեծ սարեր պետք է շուռ տալ, վորպեսզի կարելի լինի իրավունք և հնարավորություն ստանալ այդպիսի խնդիրներ դնելու: Վորովհետև կոմունիստական կուսակցության և ժողովրդի անկուսակցական մասսաների ընտրական բլոկ ստեղծել և այդ հիման վրա համերաշխորեն անցկացնել իշխանության դերագույն որդանների ընտրությունները—դա մեծ դործ է, դա համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող դործ է:

Վորպեսզի մենք կարողանայինք մտնենալ այդ խնդրին, մենք պետք է ապրեյինք մինչև Հոկտեմբերյան հեղափոխության 20-ամյակը: Իսկ մինչև այդ 20-ամյակն ապրելը չեր կարելի, առանց մինչև հիմքը ջախջախելու Հոկտեմբերյան հեղափոխության բոլոր թշնամիներին մեր յերկրում: (Յերկարատև ծափահարություններ):

Հոկտեմբերի դործի համար մղած այդ պայքարում հենց կազմավորվեց կոմունիստների և անկուսակցական բանվորների ու դյուղացիների դաշինքը: Հոկտեմբերյան հեղափոխության բոլոր ետապներում բոլշևիկները պայքարում եյին հանուն այն բանի, վորպեսզի ամրապնդեն բանվորների ու դյուղացիների դաշինքը, վորպեսզի կուսակցության շուրջը համախմբեն քաղա-

քի ու գյուղի անկուսակցական աշխատավորների ամբողջ մասսային: Հոկտեմբերի բոլոր և ամեն տեսակի թշնամիների դեմ մղած պայքարի մեջ կուվեց կոմունիստների այդ դաշինքն անկուսակցական բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի հետ: Այժմ մեզնում արդեն հնարավորություն կա այդ դաշինքը դարձնել Գերագույն Խորհրդի ընտրություններն անցկացնելու հիմք:

Անկուսակցական մասսաների հետ բոլշևիկների այդպիսի դաշինք ստեղծելու հնարավորության մասին խոսելու համար պետք եր Խորհրդային Միության մեջ սոցիալիզմի հաղթանակ ձեռք բերել: Մենք այդ ձեռք բերինք: Այժմ սոցիալիզմն է վորոշում մեր յերկրի ամբողջ կյանքը:

Մենք վոչ թե պարզապես ջախջախեցինք թշնամիներին, մենք կառուցեցիք նոր պետություն, ստեղծեցինք նոր հասարակություն, ստեղծեցինք նոր, խորհրդային ժողովուրդ: (Ծափահարություններ վորոտ):

Մենք ստեղծեցինք խորհրդային ժողովուրդ, վորտեղ տեղ չկա շահագործողների համար, վորտեղ բոլոր քաղաքացիներն աշխատավորներ են, վորտեղ, հետևապես, ամբողջ ժողովուրդը մի ընդհանուր շահ ունի: Այս պատճառով հնարավոր յեղավ խոսել անկուսակցական բանվորների ու գյուղացիների հետ, անկուսակցական ծառայողների ու ինտելիգենցիայի հետ կոմունիստների կնքած ընտրական բլոկի մասին: Այս նվաճումը նրանով է մեծ, վոր անկուսակցականների հետ կնքած այդպիսի դաշինքի մասին մենք կարող ենք խոսել ինչպես ամբողջ Խորհրդային Միության մեջ, այնպես էլ յուրաքանչյուր խորհրդային հանրապետության մեջ առանձին վերցրած:

Մեր յերկրում Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ կոմունիստների ու անկուսակցականների ընտրական բլոկ ստեղծելը նախապատրաստելու համար մենք պետք է նվաճեինք Ստալինյան Սահմանադրությունը: Այդ Սահմանադրության, հաղթանակած սոցիալիզմի Սահմանադրության հիման վրա պիտի ընթանան ընտրությունները դեկտեմբերի 12-ին:

Ստալինյան այդ Սահմանադրությունն ստանալու համար մեզ ի՞նչ եր պետք:

Դրա համար մենք պետք է, նախ և առաջ, նվաճեինք և ամենքից ու ամեն տեսակի հարձակումներից պաշտպանեինք խորհուրդների իշխանությունը: Մենք այդ կատարեցինք հաջողությամբ:

Այնուհետև: Դրա համար մենք պետք է ունենային այնպիսի կուսակցություն, վորպիսին Լենինի—Ստալինի կուսակցությունն է: (Յերկարատև ծափահարություններ):

Այդ Սահմանադրությունը նվաճելու համար, վերջապես, մեր ամբողջ գործի գլուխ կանգնած պիտի լիներ նա, ով միշտ դիրքումն է, ով միշտ իր նավատատական կամքկակի վրա է, ով իր ձեռքին ունի ճիշտ կողմնացույց, ով կարողանում է բոլշևիզմի դրոշի չուրջը համախմբել բոլոր աշխատավորներին, ում անունն անխզելիորեն միացած է սոցիալիզմի հաղթանակների հետ: Մի խոսքով, մենք Ստալինյան Սահմանադրություն ունենք այն պատճառով, վոր մեր կուսակցությանը և Խորհրդային Միության բոլոր աշխատավորներին առաջնորդում է սոցիալիստական Սահմանադրությունն ստեղծող ընկեր Ստալինը: (Բուռն

ծափահարություններ, «ուռա» բացականչություններ, բոլորը վոտքի յեն կանգնում, բացականչություններ. «Կեցցե՛ ընկեր Ստալինը»):

Սրանից հետո հասկանալի յե, թե ինչպես մեր առջև իր ամբողջ հասակովը մեկ կանգնեց Գերագույն Խորհրդի ընտրությունների հիմնական խնդիրը—մեր պետության գերագույն օրգանի դեպուտատների ընտրությունների ժամանակ անկուսակցական բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի հետ կոմունիստների բարեկամական դաշինքն ապահովելու խնդիրը: Այս խնդիրն իր ամբողջ թափով ծառացավ մեր առջև այն ժամանակ, յերբ մենք ձեռք բերինք խորհրդային ժողովրդի իրոք բարոյական և քաղաքական միասնություն, վորն այժմ հանդիսանում է վորպես հիմք մեր սոցիալիստական հասարակության, վորը և սոցիալիզմի մարմնացումն է խորհրդային մեծ ժողովրդի կյանքում: (Ծափահարություններ):

Խոսքը վո՞ր բլոկի մասին է: Մեր կուսակցության մեջ յերկու միլիոն կոմունիստներ կան և կես միլիոն համակրողներ: Իսկ Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ 90 միլիոնից ավելի ընտրողներ կլինեն: Կոմունիստներն, ինչպես տեսնում ենք, կազմում են ընտրողների ամբողջ մասսայի փոքր մասը միայն, սակայն նրանց ուժը նրանումն է, վոր դա ժողովրդի ավանդարդն է: Ամբողջ ժողովրդի շահերի տեսակետից ի՞նչ ավելի լավ բան կարող է լինել, ի՞նչ ավելի լավ բան կարող է լինել մեր ազգամիններում, քան կոմունիստների ու անկուսակցականների համերաշխ ընտրական դաշինքը՝ հանուն սոցիալիզմի հետագա հաղթանակների՝ մեր յերկրում: Ահա մենք ուզում ենք, վորպեսզի յերկու միլիոն

կոմունիստներն այդ 90 միլիոն ընտրողների հետ միասին, համերաշխորեն, համաքայլ գնան Գերագույն Խորհրդի ընտրություններին: (Միահամուռ ծափահարությունների վորոտ):

Դա փոքր խնդիր չե, ընկերնե՛ր: Ձեռք զարկել այդպիսի խնդրի՝ նշանակում է ձեռք զարկել մեծ գործի: Սակայն ժողովրդական մասսաների հետ բոլշևիկյան կուսակցության ունեցած կապն այնքան հաստատուն է, վոր մենք համոզված ենք այն բանում, վոր մեր կուսակցությունը բոլոր հիմքերն ունի պատվով կատարելու այս մեծ խնդիրը: (Ծափահարություններ):

Այսպիսով, գործը վերաբերում է խորհրդային ժողովրդի ամբողջ մասսայի հետ կոմունիստների ունեցած բլոկին: Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ մեզնում, մեր խորհրդային ձևով, պետք է ստեղծվի ժողովրդական միասնական ֆրոնտ, չտեսնված ուժի ու նշանակության ժողովրդական միասնական ֆրոնտ: (Ծափահարություններ):

Անկուսակցական մասսաների հետ, ամբողջ ժողովրդի հետ կոմունիստների ունեցած այսպիսի բլոկի մասին այժմ կարող են միայն յերազել մեր արտասահմանյան բարեկամները: Մենք այդ բանին հասել ենք համառ պայքարով, չինայելով ուժերը, չվախենալով զժվարություններից, և մենք ամբողջ հոգով մեր արտասահմանյան բարեկամների հետ ենք, վորոնք արդեն այժմ հավատացած կերպով ասում են. կգա ժամանակ, և մեզնում ել այդ բանը գլուխ կգա: (Բուռն ծափահարություններ):

II

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐՏԱՔԻՆ ՎՏԱՆԳԻ ՀԱՆԴԵՊ

Մեզ վիճակվեց գործն սկսել ու առաջ տանել ծանր պայմաններում։ Մինչև այժմ մեզ վիճակված է սոցիալիզմի կառուցման գործն առաջ տանել միայնակ, կապիտալիստական պետությունների թշնամական շրջապատման մեջ։ Սրանումն է բանվորների ու գյուղացիների առաջին սոցիալիստական հանրապետության դրության առանձնահատկությունը։

Մեր գործի իրավացիության մեջ համոզված՝ մենք հենց սկզբից փնտռում էինք միայն մի բան—ժողովրդի խաղաղ աշխատանքն ապահովելու հնարավորություն, խորհրդային կարգի ուժը ցույց տալու պարզ հնարավորություն, մի կարգ, որտեղ ժողովուրդն ազատված է բոլոր այդ պարոնայք կապիտալիստների, կալվածատերերի ու գեներալ-ուրյադնիկների վոհմակից։

Սակայն և մեր դասակարգային թշնամիներն էլ հասկանում էին, որ չահագործողներից ազատագրված ժողովուրդը վտանգավոր ուժ է իրենց համար։ Դրա համար էլ նրանք ամեն բան անում էին, որպեսզի խափանեն խաղաղությունը, խանգարեն Խորհրդային հանրապետության խաղաղ զարգացումը։

Բանվորական ու գյուղացիական քիչ արյուն չի թափվել՝ խորհրդային իշխանությունը պաշտպանելու համար, թշնամիներից դիրք դիրքի հետևից հետ խլելու համար։

Մեզ վիճակվեց մի քանի տարի չարունակ տանել

ոտարերկրյա ինտերվենտների գոյությունը մեր յերկրի տերիտորիայի վրա, սակայն այնուամենայնիվ մենք նրանց բոլորովին ու ընդմիշտ դուրս չպրտեցինք մեր պետությունից։ (Ծափահարություններ)։

Կապիտալիստական արտաքին շրջապատումը, սակայն, չարունակում է գոյություն ունենալ։ Գրեթե յուրաքանչյուր գարնան մեզ նորից ու նորից վիճակվում էր իմպերիալիստների կողմից ռազմական հարձակման սպասել։ Այսոր սրանք էին սպառնում, վաղը՝ մյուսները։ Ի՞նչ փորձ ասես չեյին անում ձախողելու մեր խաղաղ կարճատև գաղարը, որի համար մենք այնպես պայքարում էինք։ Թե որքան Խորհրդային Միության համար առանձին մոմենտներում մեծ էր ռազմական վտանգը, յերևում է այն բանից, որ խորհրդային իշխանության գոյության առաջին տարիներին Լենինը մի անգամ չէ որ գրել է, որի վրա ավելի ուշ բազմիցս մատնանշել է նաև ընկեր Ստալինը։

Բոլշևիկյան կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն ամեն բան արին, որպեսզի յերկարաձգեն կյանքի խաղաղ ժամանակաշրջանը, որպեսզի խորհրդային ժողովրդին ազատեն ռազմական ընդհարումներից և ժողովրդի համար հնարավորություն ապահովեն չարունակելու խաղաղ աշխատանքը։

Մեզ հաջողվեց հասնել այն բանին, որ արդեն 16 տարուց ավելի յե, ինչ մեր յերկիրն ապրում է խաղաղ պայմաններում, և վոչ վոք չի կարող ասել, թե մենք վատ ենք ոգտագործել այդ կարճատև դադարը, թե մենք քիչ բան ենք արել ժողովրդական տնտեսության վերելքի համար, կուլտուրական շինարարության աճման համար, ժողովրդի ամբողջ կյանքը նոր, սոցիա-

յիստական հիմունքով վերանորոգելու համար։ (Ծափահարություններ)։

Մեր յերկրի ժողովուրդը պատերազմներով տանջված եր։ Ռուս-յապոնական պատերազմի և վերջին իմպերիալիստական պատերազմի միջև, որին մասնակցում եր Ռուսաստանը, անցել և ընդամենն ութ տարուց մի քիչ ավելի։ 1905 թվականին Յապոնիայի հետ վարած պատերազմում Ռուսաստանը ջարդվեց։ 1914 թվի կեսերից նա մտավ նոր, ե՛լ ավելի արյունռուչտ պատերազմի մեջ, որը յերկարաձգվեց մի շարք տարիներ։ Հասկանալի յե, որ ժողովուրդը ծարավի յեր խաղաղության, ծարավի յեր պատերազմից կարճատև դադար առնելու։

Խորհրդային իշխանության խոշորագույն արժանիքներից մեկը պետք է համարել այն բանը, որ վերջին 16 տարիների ընթացքում մեր ժողովուրդը ազատված է յեղել ռազմական ընդհարումներից։ (Ծափահարություններ)։

Մենք գիտենք, թե ով-է այժմ շտապում նոր պատերազմների։ Նա, ում տանը ամեն բան կարգին չե, ում գործերը խախուտ են։ (Ծիծաղ)։ Իսկապես ասած, ցարական կառավարությունն ել խճճվեց 1905 թ. և 1914 թ. պատերազմների մեջ, յերբ նրա վոտքերի տակ հողն այրվում եր։

Մեզ մոտ դրությունն այդպես չե, ուստի և մենք խաղաղություն ենք ցանկանում և համառորեն պայքարում ենք խաղաղության գործի համար։ Մենք չենք կասկածում, որ խաղաղության այս քաղաքականությունը կարող է և կծառայի վորպես հիմք անկուսակցական մասսաների հետ կոմունիստների կնքած ընդարական բլոկի համար։ (Բուռն, յերկարատև ծափահարություններ)։

Մենք մեր թշնամիներին գլխովին ջարդեցինք—այդ բանը վոչ վոք չի կարող ժխտել։ Սակայն խորհրդային ժողովրդի գլխավոր թշնամին գտնվում է մեր յերկրի սահմաններից դուրս, ռազմատենչ իմպերիալիզմի բանակում, առանձնապես Ֆաշիստական յերկրներում։ Նա իր համար հենարան չի կարող գտնել մեր ժողովրդի մասսաներում, սակայն այդ պատճառով նա ե՛լ ավելի ջանք է գործադրում, վորպեսզի վնասարարությամբ, դիվերսիաներով, ահաբեկելով ու տեռորով մեր շինարարության տակը փորի։ Դրա համար ոտարերկրյա հետախուզություններն ոգտագործում են ամեն տեսակի վախկոտ փոքրոգիների, դրա համար նրանք պահում են ամեն տեսակի լրտես-արոցկիստներ ու ռիկով-բուխարինյան վնասարարներ ու դիվերսանտներ, վորոնք տակից փորում են մեր յերկրի պաշտպանությունը, ձգտում են իրենց արտասահմանյան սպիտակգվարդիական-մենշևիկյան ագենտների միջոցով փչացնել, խափանել ոտարերկրյա պետությունների վերաբերմունքը դեպի Խորհրդային Միությունը։ Այդ փաստերը հաշվի չառնել մենք չենք կարող։ Մենք այդ բոլոր մատնիչներին, դավաճաններին, պրովոկատորներին ու լրտեսներին մինչև վերջը պետք է մերկացնենք։ (Ծափահարություններ)։

Մենք այժմ ավելի լավ գիտենք, քան վորևե մեկը, թե ինչպիսի սողանցքներով են նրանք մտնում մեր խորհրդային տունը, և մենք սովորել ենք ավելի լավ, քան վորևե մեկը, խփել նրանց հենց ճակատին։ (Բուռն, յերկարատև ծափահարություններ)։

Ռաբերկրյա բուրժուազիայի այս լրտեսներին մենք պետք է հաշվի առնենք այն պատճառով, որ նրանց պլանները կապված են դրսից ապասվող ռազմական հարձակումների նախապատրաստման հետ, որ նրանք յերազում են այն մասին, որպեսզի ճախողեն մեր ժողովրդի խաղաղ աշխատանքը:

Այս ամենը մեզ ստիպում է լուրջ միջոցներ ձեռնարկել՝ ամրապնդելու յերկրի պաշտպանությունը: Այդ միջոցները մենք համառորեն անց ենք կացնում, մենք ամրապնդում ենք Կարմիր Բանակը, ամրապնդում ենք պաշտպանողական արդյունաբերությունը և ուզում ենք, որպեսզի մեր ամեն մի գործարան ու ամեն մի կոլտնտեսություն լինեն մեր տնտեսության, կուլտուրայի և պետական պաշտպանության ամրոցներ: (Բուռն ծափահարություններ):

Ցեռ կարծում եմ, որ յերբ մենք այդպես ենք վարվում և յերբ մենք հանուն պաշտպանության կարիքների կրճատում ենք մի քանի այլ կարիքների բավարարումը, ապա մենք ճիշտ ենք վարվում: (Ցերկարատև ծափահարություններ):

Մենք համոզված ենք, որ այս բանում ևս մեզ ամրողջությամբ կաջակցի կոմունիստների և անկուսակցական մասսաների բլոկը: (Բուռն ծափահարություններ):

Մենք կողմնակից ենք խաղաղության քաղաքականության՝ հանուն մեր քաղաքացիների խաղաղ աշխատանքի ապահովման, հանուն կոմունիզմի, որ կառուցում է մեր ժողովուրդը: Ինչպես հայտնի է, միքանի ֆաշիստական պետություններ այս բանին պատասխանում են կոմունիզմի դեմ ռազմական յերկյակ և յեռյակ դաշինքներ կնքելով: Դա այսպես է արվում.

1-38649

Վորպեսզի չընկնեն, իրար ձեռք են բռնում, յերկուսով... (ծիծաղ, ծափահարություններ), իրար ձեռք են բռնում յերկուսով, յերեքով, թերևս և չորսով, ըստ յերևութին, այնպիսիները, ովքեր արդեն չեն հավատում իրենց սեփական ուժերին: Սակայն, իրար ձեռք բռնելով, նրանք իրենց դեռևս չեն փրկում այն վտանգից, որ նրանք հենց իրենց վոտքերի տակի հողը կորցնում են: (Ծափահարություններ):

Մենք պատերազմ չենք ուզում,—ամենքն այդ բանը գիտեն: Մենք պայքարել ենք ու կպայքարենք հանուն խաղաղության գործի: Այլևս ի՞նչ ապացույցներ էն պետք այստեղ:

Տեսեք, թե վորքան խաղաղ են վառվում Կրեմլի մեր հնգաթև աստղերը: Նրանց լույսը հեռու և վստահորեն է լուսավորում: Ասում են, որ այդ աստղերը տեսանելի յեն Մոսկվայի բոլոր ծայրերից: Ասում են նաև, որ նրանք տեսանելի յեն Խորհրդային Միության համարյա թե բոլոր ծայրերից: (Բուռն ծափահարություններ):

Դե՛, իսկ ի՞նչպես կլինի պատերազմի դեպքում, Խորհրդային Միության վրա ռազմական հարձակում տեղի ունենալու դեպքում:

Դրան մենք կարող ենք ասել, որ Խորհրդային Միության վրա ռազմական հարձակում տեղի ունենալու դեպքում հարձակվողը կփորձի ինչպես մեր յերկրայա ինքնապաշտպանության ուժը, այնպես և խորհրդային բոսորագույն աստղերի լույսի ուժը, որոնք լուսավորում են մեր յերկրի սահմաններից շատ հեռու: (Միահամուռ ծափահարությունների վորոտ):

III

ԱՄԵՆԲԸ ԴԵՊԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս ամենից են յելնում բոլշևիկները՝ առաջարկելով ընտրական բլոկ անկուսակցականների հետ: Սրանից են յելնում բոլշևիկները, կոմունիստներին առաջարկելով Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ լիովին աջակցել վոչ միայն կուսակցական, այլև անկուսակցական թեկնածուներին և հույս ունենալով, վոր բոլոր անկուսակցական ընտրողները նույնպես կպաշտպանեն կոմունիստներին, ինչպես և անկուսակցական թեկնածուներին: (Ծափահարություններ):

Ամե՛նքս դեպի ընտրություններ, ամենքս, վորպես մի մարդ, դեկտեմբերի 12-ին ներկայանանք Գերագույն Խորհրդի դեպուտատներ ընտրելու համար: Այս պիտի ասի իր հուժկու ձայնով կոմունիստների և անկուսակցական քաղաքացիների ընտրական բլոկը: Վորքան ավելի լավ կատարենք մենք այս խնդիրը, այնքան ավելի շատ և այնքան ավելի վճռական կլինի անկուսակցականների հետ կոմունիստների կնքած ընտրական բլոկի հաջողությունը:

Խորհրդային յերկրի բոլոր քաղաքացիների համար,—մեր ամեն մի քաղաքացու համար,—մեր ընտրական բլոկում տեղ կա: Մեր բլոկը հիմնված է տասնյակ միլիոնավոր խորհրդային քաղաքացիների դաշինքի վրա, տակայն մենք գիտենք, վոր այդ բլոկի յուրաքանչյուր առանձին մասնակից, յուրաքանչյուր առանձին ընտրող դեկտեմբերի 12-ի ընտրություններին ցուցաբերած իր մասնակցությամբ ավելացնում է այդ բլոկի ուժը: (Ծափահարություններ):

Այդ ընտրություններին կմասնակցեն նաև խորհրդային իշխանության թշնամիները: Մենք իրականացնում ենք ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկություն առանց վորևե սահմանափակումների: Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ մեր խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի այդ պարոններին թողնենք միայնակ, խորհրդային ամբողջ ժողովրդից խղճալիորեն մեկուսացված վիճակում: (Բուռն ծափահարություններ):

Գերագույն Խորհրդի ընտրությունները նշանակում են, վոր մեր Ստալինյան Սահմանադրությունը գործի է դրված, վոր նա դարձել է խորհրդային իշխանության շուրջը, բոլշևիկյան կուսակցության շուրջը, ընկեր Ստալինի շուրջը ժողովրդի նոր համախմբման մի հզոր գործիք, վոր սոցիալիզմ կառուցողները մեր յերկրում զնում են դեպի նոր մեծ հաղթանակներ: (Ծափահարություններ):

Գերագույն Խորհրդի ընտրությունները մենք նշում ենք ստախանովյան ռեկորդներով: Մենք կրազմապատկենք այդ ռեկորդները և որ որի վրա կհետևենք այդ հաջողություններին, կուսումնասիրենք այդ հաջողություններն ապահովող պայմանները, կտարածենք այդ հաջողությունները բանվորների միջև: Ստախանովյան մի որվա հաջողությունները մենք կդարձնենք տեսական հաջողություններ, ամբողջ ցեխերի, ամբողջ գործարանների հաջողություններ: Մեր գործարաններն աշխատում են ավելի լավ ու ավելի արտադրողաբար, քան արտասահմանյան ամենալավ գործարանները: (Բուռն ծափահարություններ):

Մենք այս ընտրությունները նշում ենք 1937 թվին հացահատիկի նշանավոր բերքով: Մեր յերկիրը դեռևս

յերբեք չի հավաքել այնքան հացահատիկ, վորքան այս տարի, յերբ բերքը հասավ 7 միլիարդ փթի: (Ծափահարություններ): Մենք համոզված ենք, վոր գյուղատնտեսության մեջ ձեռք բերած այս հաջողությունները վոչ միայն կպահպանենք, այլև կավելացնենք այդպիսիները գյուղատնտեսության բոլոր ճյուղերում և Խորհրդային Միության բոլոր մարզերում: (Ծափահարություններ):

Գերագույն Խորհրդի ընտրությունները մենք նշում ենք կուլտուրական նվաճումների բազմապատկումով: Վորպեսզի վերջ տանք կապիտալիզմի մնացորդներին մարդկանց գիտակցության մեջ, մենք պետք է ծավալենք հսկայական աշխատանք հանուն մեր կուլտուրայի սոցիալիստական բովանդակության իր բոլոր ազգային ձևերով և բոլոր լեզուներով: (Բուռն ծափահարություններ): Թող ե՛լ ավելի արագ աճեն խորհրդային ինտելիգենցիայի ուժերը: Լա՛յն ճանապարհ տանք խորհրդային յերկրի ժողովուրդների տաղանդավոր մարդկանց:

Գերագույն Խորհրդի համերաշխ ընտրությունները, դեկտեմբերի 12-ին ամբողջ 90 միլիոն ընտրողների մասնակցությունն ընտրություններին, ամենաուժեղ կերպով կամրապնդեն Խորհրդային Միության հզորությունը, ե՛լ ավելի կբարձրացնեն խորհրդային իշխանությունը, կփառաբանեն Լենինի—Ստալինի մեծ դրոշը բոլոր յերկրների աշխատավորների միջև: (Բուռն, յերկարատև ծափահարություններ):

Մենք պետք է Գերագույն Խորհրդի ընտրություններն այնպես անցկացնենք, վորպեսզի կրեմլյան աստղերի կարմիր լույսն ե՛լ ավելի պայծառ փայլի ԽՍՀՄ աշխատավորների համար և ամբողջ աշխարհի ճնշված-

ների համար և վորպեսզի մեր կուսակցությունն ու ընկեր Ստալինն այդ ընտրությունների մասին միայն մի խոսք ասեն. «Լա՛վ է»: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, վոր վեր են ածվում ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում: Բացականչություններ. «Լենինյան-ստալինյան Կենտկոմին ուռա՛», «Ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինին ուռա՛», «Կեցցե՛ Գերագույն Խորհրդի դեպուտատության թեկնածու ընկեր Մոլոտովը, ուռա՛», «Հանո՛ւն կոմունիստների և անկուսակցականների միջև ընտրությունների ժամանակ կնքված բլոկի: Ամենքս դեպի ընտրությունները, ընկերնե՛ր, ուռա՛»):

Տպագրվում է Լ. Նազարյանի հսկողությամբ
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Գոյուխանյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր № Կ. 2527, հրատ. № 745
Գաղվեր № 226, տիրաժ 7000
Հանձնվել է արտադրության 2/XI 1939 թ.
Ստորագրվել է տպագրելու 5/XI 1939 թ.
Գինը 15 կոպ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան, Երևան, Ալլահվերդյան № 65

80

ՀՀ Ազգային գրադարան
NL0938291

ԳԻՆԸ 15 Կ.
557
1
3864

В. М. МОЛОТОВ

Об избирательном блоке коммунистов с беспартийными

Речь на собрании избирателей Молотовского округа Москвы 8 декабря 1937 г.

Государственное издательство политл. литературы
Ереван 1939